ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

-- հունիսի 2023 թվականի N ---Ա

## «ԵՐԵՎԱՆԻ ՋԵՐՄԱԷԼԵԿՏՐԱԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՀԱՇՎԻ ՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ N1 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ N1 ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N516-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոնների 217.2-րդ կետը և հաշվի առնելով «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 2023 թվականի մայիսի 24-ի NԱԲ/195-2023 գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ «Արդշինբանկ» և «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունների միջև 2023 թվականի մայիսի 24-ին կնքված՝ «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հատուկ հաշվի վարման մասին N1 պայմանագրում փոփոխություն կատարելու մասին N1 լրացուցիչ համաձայնագրին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Արդշինբանկ» և «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերություններին օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝** **Գ.ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- հունիսի 2023թ.